

Հ. Սիմոն Երեմեան՝ Մխիթարեան ներհույն վարդապետը 1901ին («ԲԱԶՄԱՎԷՊ» 1901, էջ 68 և այլն) այս ձեռագրին վրայ բաւական մանրամասն և լաւ ուսումնասիրութիւն մը հրատարակեց, վերագրելով նաեւ այս առթիւ Մանուկ Պոնտաղիին հեղինակութիւն մը, որ՝ ներուի ինձ ըսել, թէ չափազանցեալ էր և անիրաւ, պատիւը և հեղինակութիւնը աւելի կը վերաբերի Մանուկին հօրը՝ Սահակին քան թէ իրեն։

Այն բոլոր ձեռագիր բժշկարանները, զորս Հ. Մինաս Վ. Բժշկեան Ս. Ղազար բերած է իրեն իւր հօր սեպական, բուրն ալ իւր հաւունն էին. և կը տեսնեմ որ Մանուկ այնչափ ուշադիր եղած է այս կէտին, որ իւր անունին ըով ՈՐԻՆ ԲԺԻՇԿ ՍԱՀԱԿԵԱՆ բառերը գրել քնաւ չէ մոռցած։ Եւ այսպէս՝ 18րդ դարը կու տայ մեզ երկու բժիշկ՝ Հայր և Որդի, ՍԱՀԱԿ և ՄԱՆՆՈՒԿ Պոնտաղիները, որոնք երախտաւոր կ'ընեն զմեզ այսօր. զի Սիմոնովաթի գործերուն անմահութիւն տուած են, անոնց հետ յաւէժացնելով և իրենց անունները։

ՏՕԹԹ. ՎԱՂԱՐՍ Բ. ԹՈՐՈՍՅԱՆ

Վեմետիկ — Ս. Ղազար

10 փետրուար 1923 (շարունակելի)

ՔՆՆԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵՃՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(Լ. Մարիէսի աշխատութեան առթիւ)

(շար. տես Բազմ. 1925 էջ 196)

Եզնիկի քննադատին յաջողուել է գտնել մի քանի նոր աղբիւրներ — և այս նորա գլխաւոր արժանիքն է։ Հին և նոր աղբիւրները միասին կազմում են մօտ 12 հեղինակից բաղկացած մի փունջ, Դժուար թէ Եզնիկին անմիջապէս այդ հեղինակներէից քաղած լինի այն հատուածները, որ նրա մանուկին ունին։ Աւելի շուտով զուգահեռաբաններն են, որ առնուած են ընդհանուր աղբիւրից։ Արդարեւ, եթէ ձեռքի տակ ու-

նենար Որիզանին կամ Դիողորին, մեր մատենագիրը չէր բաւականանալ այս կամ այն երկտող օրինակները քաղուածելով. նորանց մօտ իրեն համար պիտանի շատ աւելի նիւթեր պիտի գտնէր։

Եւ մենայն դէպս Եզնիկի գործը մի զրաւ կան զողորդի չէնք է, թէ և տարբեր նիւթերից, տարբեր՝ ըստ որակի և ըստ ծագման։

Այստեղ մենք պիտի բաժանուենք առ այժմ Մարիէսից, որպէս զի կանց առնենք մի հարցի վերայ, որ մեր հետաքրքրութեան նիւթն է և որի պատասխանը չենք գտնում Մարիէսի մօտ։

Մարիէսի աչքում եւս Եզնիկը տեսակ տեսակ քարերից շինած մի գործ է. նա աշխատել է և յաջողել է գտնել այն թելը, որի վերայ նրանք շարուած են. գտել է այսպէս ասած շարադրական գիծը։ Բայց ի՞նչ յարաբերութիւն կայ զանազան մասերի, զանազան քարերի մէջ, ինչպէս են նրանք ըովձերով եկել, նրանց այսպէս առած ծննդական (génétique) կապը, մնացել է առկախ Գննել այս հարցը, նշանակում է որոշել, արեօք Եզնիկը խմբագրական գործ է թէ սկզբնագիր։

Առնենք յառաջաբանը, այն է առաջին երեք զլուխները, որ Մարիէս ևս ներառութիւն է անուանում. Եթէ մի կողմ թողնենք ինչ որ վերցրած է Արիստոդից և կամ ինչ որ նմանութիւն ունի Բարսեղի Վեցօրեայքին և մնացած մասը համեմատենք իսկական աղբիւրներին՝ Աղամանտ (իոս)ի և Միթող(իոս)ի հետ, յառաջաբանը կը ներկայանայ մեզ իւր հիմնական և թարմատար մասերով։

Սկզբից եեթ Եզնիկը շնչտում է աստուծոյ անհասութիւնը, անքննութիւնը, որպէս զի որոշի հաւատի և գիտութեան սահմանները առաջիկայ բարձր նիւթի մասին ճառելիս։ Նոյնը տեսնում ենք և Աղամանտի յառաջաբանում, ուր այլ խօսքերով միևնոյն միտքն է արտայայտում. «ἐπὶ τὴν ἀξίεραστον καὶ ἀξιώχαστον πίστιν τὴν εἰς θεὸν ἀφορῶντες ἐγχαρτεῖς τῆς ἀμεινονος καὶ τελειοτάτης δόξης γίνονται», այս-

սինքն՝ ով որ ապաւեն ունի ամենասիրելի հաստուն առ աստուած, նա և տէր է լաւագոյն և կատարեալ գիտութեան:

Մեթոդի ներածութեան գլխաւոր իմաստը եւս պահպանուած է Եղնիկի մօտ: Պատարայի եպիսկոպոսը հակադրում է արտաքին բնութիւնը, նորա ահաւոր երեւոյթներն անշեղականութիւնը մի կողմից և ընկերական կամ մարդկային կեանքի յեղեղականութիւնը միւս կողմ արարչութեան տեսակէտից: Անցեալ օրը կանգնած ծովափին, խորհում է Մեթոդը, դիտում է իր բնութեան հրաշալիքները. խոռովայնոյ ծովը կուտակում էր ամենի ալիքներ, կարծես, պատրաստ էր ողողելու և լափելու երկիրը: Յանկարծ ստրկի հլուութեամբ յետ են քաշուում ջրերը և հանգարտում իր սահմաններում: Գերազոյն և անբերելոյ զօրութեան արդիւնք: Նշանկերպ և երկնամարը իր ըրջառնութեամբ, արևը ծագելով է մայր մտնելով, լուսինը աճում արև և նուազելով կրում են իրենց վերայ անհաս վերին ոյժի ներդաշնակ տնօրէնութիւնը:

«Իստնալով տուն», Մեթոդը հանդիսատես և լինում այլ պատկերի, հասարակական կենցաղի ներհակ և անհաշտ երեւոյթներին:

Այսպէս բնութեան մէջ թաքաւորում է անփոփոխ ներդաշնակութիւնը, իսկ մարդկային կեանքում անկայութիւն: Մի տեղ տիրում է մշտնջենական օրէնքը, միւսում՝ յեղեղուկ ազատութիւնը:

Նոյն հակադրութիւնը տեսարանների նկատուում է և Եղնիկի յառաջարանում: Խօսելով արեգակի, լուսնի և չորս տարրերի մասին հայ մատենագիրը ընդգծում է, որ որքան և դրանք գեղեցիկ և օգտակար լինին, իրենք այդ չգիտեն և չեն զգում: Անգիտակցութիւնն է այն մեծ անշըպետը, որ զատում է միմեանցից բանաւոր և անբան աշխարհները: Արեգը, ջուրը, հուրը, օդն ու երկիրը թէ իցեն և թէ չիցեն զայն ոչ գիտեն և զապասաւորութիւնն, յոր կարգեցան անդադար մատուցանեն, վարելով այնր, որ կազմեաց

զնոսա»: Ուրեմն, բնութեան տարբերը անգիտակցօրէն ընթանում են միմեկմէկ ընդ միշտ սահմանուած օրէնքի համաձայն: Օրինակաւնութեան և կամ անհրաժեշտութեան սկզբունքը արտայայտում է Եղնիկը մի հրաշալի պատկերով, ուր Աստուծուն նմանեցնում է զարմանալի կառապանի, որ վարում է աշխարհը «Իբրև զկառս լծեալ ի չորից երկվարաց», այն է չորս տարբերից:

Օրէնքի աշխարհի կից տեսնում ենք մարդու ընկերային միջավայրը «Լի անհարթութիւններով», այսինքն բարւոյ և չարի խառնակ երեւոյթներով:

Արդ «ուստի են չարիք, ուստի են աշխատութիւնք, ուստի՞ են լլկանք» ահա այն կնճիւղը, որ լուծել է ձգտում հեղինակը:

Աղամանտի մօտ ընդունուած ձև է, որ երկու կողմերը նախ քան վէճի բռնուկ պարզում են իրենց տեսակէտը. այնուհետև միայն բացում է տրամախօսութիւնը:

Այսպէս է եղել և Եղնիկի նախակազապարում: Հաւատարիմ նոյն սովորութեան յառաջարանը յայտարարում է, որ բնութեան իր ներդաշնակութեան մէջ անփոփոխ օրէնքը, նորա «գեղեցկութիւնը», ծագում է Աստուծուց, իսկ հասարակական կեանքի չարութեան և բնութեան պատճառն է անձնիշխանութիւնը» (αὐτεξουσία): Ահա ինչու «չիք ինչ չար որ բնութեամբ չար իցէ և ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց»:

Հակառակորդի տեսակէտն է, որ բարին «ի բարւոյ արարչէ է», իսկ չարի աղբիւրը հիւսկն է կամ նիւթը:

Այսպիսով Եղնիկի ներածութիւնը իր ներկա ձևով նման է կարծես մի կրկնագրի, որի մէջ նկատելի են հիմնական և թաւմատար մասեր, Հիմնականը բաղկացած է եղել երեք եղանակներից.

ա. Հաւատ և գիտութիւն. — Բ. բնական օրէնքներ, որ անհաս են և անձնիշխանութեան միջավայր, որ ցննելի և գիտելի է. — Գ. Երկու հակառակ տեսակէտ ցննելի միջավայրի կամ չարի և բարւոյ ծագ-

ման վերաբերեալ: Թարմատար են մնացեալ յաւելումները, որ ծանրաբեռնել և սքողել են հիմնականը և տուել նորան արդի կերպարանքը: Կարծես թէ հին ներկերը վերստին խմբագրուած են:

Սոյն բնաւորութիւնն է կրում և Եզնիկի գործի ամբողջութիւնը, այսինքն այս տեղ եւս նշմարելի են երկագրութեան կամ վերախմբագրութեան գծերը:

Մարիէսը Եզնիկի երկը բաժանում է երկուսի. առաջին մասը ընդգրկում է ա. բ. գ. գրքերը, իսկ երկրորդը՝ վերջին գիրքը: Այլ և առաջին մասը վեր է ածում երկու հատուածի:

Թուում է թէ այսպէս է վարուել Մարիէսը Աղամանտի տրամախօսութեան ազդեցութեան տակ: Ինչպէս երեւում է, նոյն Աղամանտի հետեւութեամբ է, որ ծնունդ է առել Մարիէսի տեղում Յաղագս աստուծոյ վերնագիրը:

Աղամանտի տրամախօսութեան մէջ առաջին վիճաբանողը ոմն Մեգեթ(իոս) է, որ պաշտպանում է Մարկիոնի վարդապետութիւնը: Երան հետեւում է Մարկուսը, որ նոյնպէս կողմնակից է Մարկիոնի ուսման: Միջնորդ դատաւորը ոմն Եւտրոպ(իոս) երկու կողմերը լսելուց յետոյ կարդում է իր վճիռը:

Այնուհետեւ հրապարակ են գալիս յաջորդաբար շարունակելու վէճը Մարին(ոս), Դրոսեր(իոս) և Վալենտ, որոնք բոլորեան կանգնած են գնդատիկ Վալենտինի տեսակէտի վրայ և ջատագով են նրա հայեացքներէ: Վերջը դարձեալ նոյն դատաւորը արձակում է իր վճիռը:

Փանի որ երկու անգամ է միայն դատաւորը որոշում տալիս, արամախօսութիւնը բաղկացած պէտք է համարել երկու բաժնից, նուիրած երկու աղանդաւորների՝ Մարկիոնի և Վալենտինի ուսմանց քննութեան: Այսպէս է բաժանուած Աղամանտի գործը նորա նոր և քննական հրատարակութեան մէջ¹.

Աղամանտի աշխատութեան կերտուածը խիստ կարեւոր է Եզնիկի կազմը և շէնքը հասկանալու համար:

Տրամախօսութեան մէջ վիճաբանութիւնը սկսում է Մարկիոնից և կրում է դաւաճանարանական բնոյթ, ինչպէս կարելի է տեսնել Աղամանտի credo-ից և դատաւորի վճռից: Միանգամայն հասկանալի է, թէ ինչո՞ւ համար Աղամանտի գործը կոչւում է *περί τῆς εἰς θεὸν ὁρμῆς πίστεως*, յաղագս որ յատուած ուղիղ հաստատոյ:

Այլ կարգ է Եզնիկի մօտ: Բայս տեղ առաջին տեղը բռնում է Վալենտինը և վէճը բուրբում է չարի խնդրի շուրջը: Առաջին գրքի սկզբի գլուխները Ա-ԺԳ. ազատ թարգմանութիւն են Մեթոդ Պատարացու (կամ Օլիմպիացու) գրութեան: Մեթոդից է քաղում նաև Աղամանտը Վալենտինի վերաբերեալ էջերը:

Հետեւեալ ԺԵ-ԽԷ գլուխները կազմում են առանձին յօդուած նոյն հարցի առթիւ: Սորա սկսուածքը, որ է՝ արդ յետ այսր ամենի հաւանութեանց յամոռեալ զնոյն ի մէջ բերին, արդէն ցոյց է տալիս, որ այս հատուածը այլ ծագում ունի քան նախընթաց գլուխները:

Նոյն առաջին գրքի վերջին իՐ գլուխը ամփոփում է վիճաբանութեանց, կարծես թէ դատական որոշում, ինչպէս Աղամանտի մօտ: Եւ ապա յայտարարում է, որ վէճը անցնում է պարսից քէշին:

Այս բաժինը բռնում է երկրորդ գրքի Ա-ԻԳ գլուխները: Հետաքրքրական է նկատել, որ ԻԳ գլխի վերջին տողերը դարձեալ արձագանգ են դատական վճռի. Եւ յայս ամենայնէ յայտնէ, եթէ ոչ է ըրնուծեալ չար այլ կամօք. և այն: Ստանով վերջանում է պարսից կրօնի հերքումը:

Երկրորդ գրքի մնացած մասը սկսւած ի՞նչ նուիրուած է աստեղագէտների և նրանց նմանների ուսմունքին:

« Բայց քանզի ի նմին յամոռութեան կան, զամենայն ինչ կենդանի և շնչաւոր համարելով, ոչ հեղգադուք և այն և առնել պատասխանի »: այս խօսքերով

1. Dr. W. H. Van de Sande Bakhuyzen. *Περὶ τῆς εἰς θεὸν ὁρμῆς πίστεως*, 1901.

հեղինակն անցնում է երրորդ գրքին, որն, ակներև, նոյն վիճաբանութեան շարունակութիւնն է, միայն թէ հեղինակի աղբիւրն է փոխուած, կամ ինչպէս Աղաժանտի մօտ է, մի երկրորդ անձն է յառաջ գալիս նոյն դրութիւնը պարզապէս ելու շատ թէ քիչ տարբերութեամբ:

Սոյն վէճը կլանում է ամբողջ երրորդ գիրքը մինչև վերջին գլուխը, վերջին, այն է ժիշ գլուխը, նորէն մի տեսակ եզրափակութիւն է վիճաբանութեան, դատական վճռի նման, որ նշան է զրոյցի աւարտման:

Եզրափակութիւնը, սակայն, գրաւում է միմիայն ժիշ գլխի առաջին երկու տառնեակի չափ առդերը: Սրան յաջորդում է մի հատուած, որը սկսում է. «ե րազում պատճառք էին և այլն», որ ոչ այլ ինչ է եթէ ոչ Մեթոդի գրութեան վերջին մասը: Եւ ապա մի ներածականով որ նոյն ժիշ գլխի վերջին մասն է սկսած՝ «և արդ ի զուր ջանան» (էջ, 270.) հեղինակն անցնում է մարկիոնականութեան քննութեան, որին յաջորդում է ամբողջ վերջին, այն է, չորրորդ գիրքը¹:

Ուշադրութեան արժանի՝ Մեթոդիկ տորը, երեք էջ 236-239, նրա իսկական տեղն է Ա գրքի ժիշ գլխից յետոյ: Եզնիկն այս տեղ, ժիշ գլխով ընդհատում է Մեթոդի փոխառութիւնը: Սորանով իսկապէս աւարտում է չարիքի մասին տարած վէճը: Այնուհետև խօսակիցը, ուրեմն վալենտինը նորէն դառնում է հիւլէի խնդրին և հարց տալիս. եթէ հիւլէն սկզբնակից չէ Ատուծուն և առաջ գոյութիւն չունէր, ինչու այժմ գոյութիւն ունի և ինչու համար է Աստուած նորան ստեղծել:

Ահա այս հարցի պատասխանն է ամփոփում յիշեալ կտորը:

Արդ ի՞նչպէս է պատահել, որ սա անջատուել է մայր բնա գրից և ընկել այնքան հեռու, այսինքն Ա գրքի ժիշ գլխից ըն-

կել է Գ. գրքի ժիշ գլուխը: Չափազանց կարեւոր հարց, որի պատասխանը կարող է յեղաշրջել մեր աւանդական հասկացողութիւնը Եզնիկի մասին, այլ կերպ ներկայացնելով մեզ նորա գործի ճարտարապետութիւնը:

Անջատումն տեղի է ունեցել, շնորհիւ միջամուկ յօդուածների, որոնք ներս մտնելով սեպի պէս ճեղքել և բաժանել են Մեթոդի գրութիւնը երկուսի: Եթէ հանենք հեռացնենք նրանց զատող յօդուածները, Մեթոդի գործը պառակտուած կտորի միջոցով անմիջապէս կը միանայ Գ գրքի, կամ Մարկիոնի ուսմունքին: Կը ստանանք մի նախակադապարի, բազկացած միմիայն վալենտինի և Մարկիոնի վարդապետութեանց նուիրած վիճաբանութիւնից: Այս եզրակացութիւնը գայթակղիչ է մանաւանդ նորանով, որ ինչպէս վերև տեսանք՝ Աղաժանտի գործը ևս ճիշտ այդ երկու աղանձաւորներով է զբաղուած մի ձեւական տարբերութեամբ, որ այստեղ առաջ Մարկիոնականն է վիճում, յետոյ վալենտինականը:

Ի նկատի ունենալով Եզնիկի խնամուածութիւնը Աղաժանտի հետ, անհրաժեշտ է լինել ենթադրել, որ հայ մատենագրի յոյն նախակադապարը նման կազմ է ունեցել: Պարսից և յոյն կրօնների հերքման միջաժուտ յաւելումով նախակադապարի ամբողջութիւնը քակտուել է և վալենտինի գիրքը անջատուել Մարկիոնից, և երբեմնեան միութեան յիշատակը պահել է մեզ վալենտինի գրոյցի կտոր, որ քնացել է կտոշած Մարկիոնի ներածականի սկզբում:

Կարևորը, սակայն, այդպիսի նախակադապարի գոյութիւնը չէ, թէև նա հասկանալի կը կացուցանէր մեզ թէ Եզնիկի մերձաւորութիւնը Աղաժանտին և թէ այն շեղումները, որ նկատուում են նորա մօտ Մեթոդի գործի թարգմանութեան մէջ: Այս բոլորը կարելի էր վերագրել ենթադրեալ նախակադապարին:

Կարևորն միջամտութեան փաստն է, այն որ առաջին գրքի ժիշ գլխից միջև երրորդ

1. Այս ներածականը իսկապէս պատկանում է հետև. սեպ գրքին, և նոր հրատարակութեան մէջ պէտք է այդպէս էլ գտնուի, ինչպէս որ առաջին հրատարակչէն Աբրահամ վարդապետն է արել և ի զուր վնասելիքից փոխել են:

գրքի վերջնի՞նք գլուխը համեմատաբար նորամուտ մասեր են: Չենք ուզում ասել, որ դրանք անհարազատ միջանկներ են (interpolation): Մենք պաշտպանում ենք այն միտքը, որ դրանք այլ աղբիւր, այլ ծագում ունին երկի ճարտարապետութեան, կառուցումի տեսակէտից: Անցնենք դրանց ճննութեան:

(Շարքարքիւի)

ՊՐՈՖ. Ն. ԱՅՈՆՑ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԳԻՐԳ ԹՂԹՈՑԻ ՄԵՋ

(աղ. ԹԻՖԼԻՍ 1901)

(Շար. տես Բազմալէզ, 1925 էջ 261)

15. Խաչարգաբար

Եւ զի Աստուծոյ սեղան իւրաքաբար օրհնութեամբ յուղղոցն և ի կատարելոցն զխաւորացն եղանի, ամենեցուն յայտ է (էջ 153):

Խաչի յարգանքով կամ պաշտամունքով եղած:

16. Խոնսուկը

Թեպէտ և ծառայք արքայից արքայի եմք, զհաւատ զԵրուսաղէմի ունիմք և կալցուք: Չի թէ ցայժմ խոնսուկը էին Տեառք, այժմ որչափ եւս առաւել երանելի եմք, որք յարքայից արքայի ծառայուլ թեան հասեալ եմք (էջ 167): Պահլաւերէն բառ մ'է, իմաստը անյայտ. հմտ. Ուխտանէս, հտ. Բ. գլուխ Խէ, էջ 76-77:

17. Կաղուկ

Եւ նա զօրէն օծի ունի, որ մինչեւ ի ջերմանալ աւուրն յար ի գազանութիւնն, և ի ցրտին աւուրն կաղուկալ իրրե կմեռեալ լինի (էջ 330):

Այս վկայութիւնը ունի նաեւ ՆՀԲ Կղարի ձևով, զոր կը մեկնէ «Իրը կուղ լինել, կծկիլ»: Այսպէս ունին նաեւ Զախւ ջախեան և Առձեռն:

Ըստ իս այս բացատրութիւնը ուղիղ չէ. բառը պէտք է կցել կաղանջ բային, որուն նշանակութիւնն է «ձմեռը օծին պաղիլ՝ թմրիլ»։ հմտ. Անյ. հց. իմ. «Կամ նոյն իսկ օծից ազգ, որ ի ջերին աւուրան յար ի գազանութիւն յանդգնի և արեգաւ կան ի հարաւ խոնարհեցելոյ՝ կաղաւէ»։

Այս մեկնութիւնը գեղեցիկ կերպով կը հաստատէ գու. Կաղարի (Ակն, Չեկիլէր) «ցուրտէն սառիլ, ընդարմանալ»։ Ինչ. Չեռքերը ցրտէն կաղուր է:

18. Կարմիր

Առաջ հինգ հարիւր կարմիր... և ելից առաջի իմ զոսկին (էջ 527)... և ետու նմա երկու կարմիր և մտեալ ի գեղեզմանն զրի երիս կանթեղս (էջ 528):

Կը նշանակէ «ոսկի, ոսկեղբամ» և է իրր թրգմ. Թրք. qəzəl բառին. նոյն զոր. ծածկութիւնը ունի նաեւ Վրդ. Պոմ. էջ 162:

19. Կերեւուրաց

Վասն Հեքրայեցւոցն ասաց զկերեւուրաց և զաստուածամարտաց ազգն զորս յարգէրն վասն արմատոյն (էջ 6):

Ոսկեղբարեան գեղեցիկ բառ մ'է. կը նշաւ նէ «կերածը ուրացող, անաղուհաց, աւ պերսխտ»։

20. Կթոց

Ըստ Հռովմայեցւոց յԱ ամսոյն յերեքն որ կոչի Սեպտեմբեր, և ասորերէն իլուլ և Հայերէն Կթոց (էջ 273):

Կրոց «Սեպտեմբեր» կազմուած Կրեյ «այգեկութ ընել» բայէն, եփշտ ինչպէս ունինք գու. քաղոց «յունիս» ամսանունը՝ քաղիլ բայէն:

21. Կեր

Պանգի և զարբանեկէն ձերոյ ասաց. ի կեր ուղույ հրաժարի, բայց մեզ բարեւ պաշտութիւն խնդրել զուշակեցաւ (էջ 196):